

ժեշտ են առողջութեան պահպանութեան և խնամածութեան համար։ ուստի և ամեն կերպ պէտք է հօգ տանել որ բնակարաններն այդ բանից զուրկ չը լինին։

2. Աշխատիր ամեն օր ամբողջ մարմինդ կամ գոնէ մարմնի վերին մասը սառը ջրով լուալով կազդուրուել։ Եթէ կարելի է գոնէ շարաթը մի անգամ տաք ջրով լողացիր՝ մարմնի մաքրութեան համար։

3. Տարուաց ու լողանակին լողացիր բաց օգում աղատ (ոչ պատապարուած) ջրում աւելի լաւ է եթէ արեւի չերմութիւնը լնկած լինի մէջը։ Տառը բուղէից աւելի մի մնար ջրի մէջ, ապա լաւ չոր սրբուիր և սկսիր զրօսնել (բայց ոչ շատ նեղ զգեստներով) մարմինդ տաքացնելու համար։ Եթէ կարելի է, հանգարտ և տաք եղանակին, լողանալուց յետոյ մի փաքր ժամանակ մնայ մերկանգամ՝ ենթարկուելով թարմ օդի և արեւի ճառագայթների ազդեցութեան։

4. Բերանդ և որկորդ մաքուր պահիր՝ ամեն առաւօտ և ամեն երեկոյ, ինչպէս և իւրաքանչիւր անգամ ուտելուց յետոյ (ճաշին, նախաճաշին և լն) լու ողողիր և մաքրիր։

5. Որքան կարելի է աշխատիր թարմ օգում բաւական շարժումներ անել։

6. Շատ տաք մի հագնուիր, գլուխդ շատ թեթև կերպով ծածկիր, իսկ պարանոցդ բուլորովին բաց պահիր։

7. Մարմնի ոչ մի մասը ամուր մի սղմիր (օր. գօտիով, զանգապանով, կոճկելով և լն.)։

8. Կոշկի, մաշկի և այլ ստնամանի կրունկն այնպիսի ձեւ պիտի ունենայ, որ քո սորքիդ յարմարէ։ Բարձր կրունկները վնասակար են, աւելի լաւ են լայն և ցածր կրունկները։

9. Երբէք թաց գուլպայով, կոշկով կամ այլ զգեստով չպէտք է մնալ, հանիր, որքան կարելի է շուտով և չորը հագիր։

10. Ուտելը և խմելը չափուոր պէտք է լինի. խուսափիր վլացան, վատ—մարսուող կերակրից, նոյնպէս և քաղցրեղէններից, մանաւանդ փոքրներին չպէտք է քաղցրաւենի։

Ներ առաջ սովորիր պարզ կերակուր գործ ածել, օր. մեծ քանակութեամբ աղ, ոգելից ըմպելիքներ, ծխախոտ և լն. հում միս և տըհա պոռազներ չպէտք է ուտել։

11. Երեկոյեան կանուխ պառկիր քնելու և առաւօտ էլ կանուխ վեր կաց։ Քնելուց առաջ որևէ փիղիքական կամ մուալոր լարուած աշխատանքով մի վրդովիր գիշերացին հանգստութիւնդ։

(Hamburger Fremden—Blatt 1893 № 295,  
Դեկտ. 16). (Եւստ. Յօստանիա).  
Թարգ. Տ. Ա.



## ՀԱՅԿԱԿԱՆՔ



## ՅԱ

որ. Պատմ. Ուսումնամիրութիւն, վերնագիրը կրող յօդուածներիս շարքում (Ե) առիթ եմ ունեցել առաջարկել մի սրբազրութիւն յետեալ հատուածում։ Համա խըժական ժառանդեցին յորջորջում, Բիւրատ և Ուշակա (Բ. կդ): Սմբատի փոխանակ առաջարկում էի կարդալ Տրդատ, Հիմնուելով այն ժամանակ ինձ յայտնի միակ մի ձեռազրի ընթեցուածի վրայ (Ոանահնի Կերսէս զըշի օրինակ): Պատմառաբանութիւնս աւելորդ է կրկնելը։ Սանահնի օրինակը մեր գասաւորութեան Բնէ։ Հետաքրքրական է իմանալ թէ որչափ է արդարանում այս կէտում առաջարկած դասաւորութիւնս։ Զեռքումն եղած բոլոր ձեռագրերի այս կէտը քննելով գանում ենք։ ամրող թենն ունի ուղիղ ընթեցուած—Տրդատ, նոյն ուղիղ ընթեցուածն ունի և ամբողջ Այրը։ Ուրեմն երկու խմբի բոլոր ձե-

\* ) Տես. նախընթաց համարը։

ռազբերը ունին Տրդատ, իսկ միւս երկու խումբ՝ սխալ ընթերցուած, այսպէս.

ԱՅ. «Տրդատ»

Թ. «Ամբատ»

Դ. «Ամպատ»

(Մանր կամ երկրորդական ընթերցուածներ, Գ. և Գ. ունին «Ապատ», սակայն Գ.՝ յետոյ աւելացնումէ բառի զիմին պակասող մենք. Գ.՝ ունի նման Դ.-ին «Ամբատ»): Ա. և ը (Ա. և Ա. 1843-ի հրատ.) չեն նշանակում որևէ տարբերութիւն այս կէտում: բայց անկարելի է որ այդ հրատարակութեան 6 ձեռագրերի մէջ չիմինի Ա. խմբից որևէ ձեռագիր, սակայն նկատեցինք որ Ա. և ը չեն տալիս բուռն ընթերցուածները, այլ միայն էկարեւոր համարուածները:

Ուղիղ ընթերցուած պէտք է լին (= Տրդատ) նաև պ. Եզեկանցի ձեռագրում, եթէ միայն ռւղիղ է միմիայն տփի կազմութեան վրայ հիմնած մեր ենթադրութիւնը: Ուղիղ ընթերցուած պիտի լինի նաև Բ.՝ օրինակում (այն է՝ Մառի նկարագրած Պ. Պետերբուրգի ձեռագրում) և Ա.՝ ձեռագրում: այսինքն է՝ կարինեանցի բաղդատութեան առինքն օրինակում: Ակային այս ձեռագրի ընթերցուածները այնչափ սակաւաթիւ են «Բաղդատութեան» մէջ, որ դժուար է մի դրական բան սակալ ուստի և ցանկում դրել ենք հարցական նշան: Շատ ցանկալի էր, որ ձեռնշաս անձինք ստուգէին այդ երեք ձեռագրերի այս բնորոշ ընթերցուածը և բարեհաջեկին հաղորդել ինձ կամ հրատարակել:

## ԺԷ

Խորենացու դժուարիմաց հատուածներից կարելի է ասել ամենադժուարիմացը, որ «գայթակղութեան քար» անունն է ստոցել, Ա. գիրքը՝ զիմի «որպէս զայր առ քէ» ծանօթ սասացուածն է: Շատ փորձեր են եղել այդ հատուածը մեկնելու, որոնք աւելորդ ենք համարում այստեղ միառմի առաջ բերել (տես Աշխարհաբար Խոր. Տնթ. 8. իմինի ոռւս.

նոր թրդ. Տնթ. 3, և լին. և լին.): Այդ փորձերից ամենայաջողն է Ա. և Ա. 1881-ի փորձագիր հրատարակութեան առաջարկածը: «որպէս զիմստարաշխութիւն» առ Ք. աղղէացիս» և զիմստարաշխութիւն» առ Ե. զիմստացիս», զիմստականութիւն» առ Փ. իւնիկեցիս», և զիմստագանութիւն» առ Թ. բակացիս»:

Սակայն իմինը իւր նոր թարգմանութեան մէջ այս բացատրութիւնը անուանեց նոյնչափ անյաջող, որչափ և առաջին փորձերը: Աւելի ճիշտ, ուրեմն և ասել է թէ աւելի լաւ՝ գնահատեց այս յաջող բացատրութիւնը Բառուագրաներ (Das Buch «Die Chrie» եր. 489), հաղորդելով, որ այդ բացատրութիւնը պատկանումէ Հ. Ափշանին (ինչպէս նաև այդ 1881-ի հրատարակութեան մէջ մտած ուրիշ մի քանի յաջող սրբագրութիւնները): Ըստ Բառմզարաների Հ. Ափշանը իւր այդ բացատրութիւնը առել է Վանական վարդապետի «Հարց և պատասխանիներից: Բառմզարաներ աւելացնում է նաև, որ նման մի ասացուած կայ և De Lagarde-ի Symmicta-ում (I, 175, 48—50), որն ես չունիմ ձեռքիս: Մի նամակում այդ մասին մի քանի նոր տեղեկութիւններ հաղորդեցի և ես «Ամսօրեայ Հանդիսին», յայտնելով որ նըման հատուածներ կան և «Դրաւիթ Այսաղթի», Մագիստրոսի և Միսիթ. Այրիվանեցու մէջ: Առաջ բերենք միայն Դրաւիթ Այսաղթի, Մագիստրոսի և Միսիթ. Այրիվանեցու մէջ: Առաջ բերենք միայն Դրաւիթ Այսաղթի, պիտու եւ գիտել, թէ չորք են տեսակը, Եւականն, Երաժշտականն, Եւականն, աստղաբանն, Եկեսցուք այսուհետեւ և ի չորրորդ զլուխն և ասացուք, թէ ոյք ոմանք են գտողք այսոցիկ տեսակաց: Եւ պարտ է զիտել եթէ Ա. և Ա. գիրքի գտին, որպէս վաճառականք գործ և թուականութեան պէտու ունելով առ ի համարելիսկ զերաժշտականն նշակալիք, վասն զի անտի էր Արքիւս, զորմէ ասեն նախ գտանել զերաժշտականն. իսկ պատճենաբան Վաղրեշին, վասն զի անամպ և հանապազ ջինջ զորլով օդոցն՝ զիւրաւ կարացին ըմբռնել զշարժ-

մունս աստեղաց, իսկ զերկառադականն եքիութացիւնից գտին ի հարկե, քանզի Աեղոս ևն» (Մատենագր. Դաւթի, վենետ. 1833, եր. 196, 199): «Սման հատուած կայ և Գիւտ Կաթողիկոսի թղթում (Կաղանկատուացի) և Վնանիա Մոկացու թղթում (§ թ) ևն, ևն»:

Ասածներիցս երևումէ, որ մեր նախնիքներին շատ լաւ ծանօթ էր Խորենացու այս հատուածի միտքը և ասացուածի գործածութիւնը հասարակաց էր: Միջնադարեան Եւրոպայում գտնում ենք նոյնը. «Les scholastique du moyen âge n'avaient donc pas si grand tort de faire entrer la musique dans le quadrivium, qui comprenait avec elle l'arithmétique, la géométrie—et l'astronomie. (Ժողացելեմ նշանակել յուշատերում թէ որտեղից եմ առել):

Այսպիսով ուրեմն չ Ալիշանի բացատրութիւնը կատարելապէս արդարանումէ: Միակ գժուարութիւնն է մնում այն, որ այս բացատրութիւնը չէ մեխում հատուածի բոլոր տառերը: Դնենք տպագրի բնագիրը. «Որպէս զայր առ քէ, և զայր և զժոյ առ փիւր, և զիենն առ եշ, և զայ առ ուշ»: Կենն ընդունելով Երկաչափութեան նշանագիրը, և շան Երաժշտութեանը՝ անբացատրելի են մնում ջան և Ան: Մինչև այս կետին հասցելելի ուսումնասիրութիւնս, առաջ քան «Ամսօրեայ Հանդիսին» գրելս (տես «Հանդէս Ամսօր» 1892, դեկտ. եր. 370—72): Այժմն մեր դասաւորած խմբերը գժուարութեան այս վերջին հանդոյցն էլ լուծումնեն: Ճիշտ տպագրի սովորական ընթերցուածն ունին ԱԲԳ, մի քանի օրինակներում շատ աննշան տարբերութեամբ (փոխանակ ասելու՝ դարձ—այբ, փոխանակ դաշ—շայ): Մինչդեռ Դան ունի հետևեալ ընթերցուածը. «Որպէս զ. առ. ք. և զ.թ. առ. փ. և զ.դ. առ. ե. և զ.շ. առ. թ.»:

Այս խմբի բազմաթիւ ձեռագրերը չունին նոյն իսկ ամենամանը տարբերութիւն: բացի կէտերի և պատիւների տարբերութիւնից, որ աւելորդ ենք համարում նշանակելու: Լաւ ուշադրութիւն դարձնելով ընթերցողը կնկա-

տէ, որ այս ընթերցուածում պակասում է զայ աւելորդաբանութիւնը, որ առաջացել է թոյի նախղիր զան իրրեւ առանձին համառօտագրութիւն ընդունուելուց: Այս ընթերցուածում ունինք «զայ առ սէ-թի փոխանական «զ. շ. առ. թ.»», այն է՝ զերաժշտութիւն առ թրակացիս: Այսպէս ուրեմն սէ ընթերցուածը սիալէ և առաջ է եկել սէի և թոյի նմանութիւնից: Երկուսն էլ կազմուած են երկու ուղղով ուղղահայեաց և հաւասար երկարութեամբ գծերից նոյն իսկ մեր ձեռագրերից մի քանիսում շփոթուելու լափ իրար նման:

Ի լրումն ամենայնի, կարծես թէ այլ ևս որ և է կասկածի տեղիք չժողովելու համար, Դէռապիլը լրւանցքում ունի հետևեալ բաղադրութիւնը, «զաստեղաբաշխութիւն առ Քաղդացիս, թուականութիւն առ Փիւնիկեցիս, երկրաչափութիւն առ Եղիպտացիս, երաժշտականութիւն առ Թրակացիսն»:

Այս ձեռագիրի (թ. 1665) յիշատակարանն է. «Եւ զայս Մովսէս Խորենացոյ Պատմագիրքս է Անդրիանու Պօլսոյ Առաջնորդ՝ Եփրեմ վարդապետին. ի վայելումն իւրումն անձին. Հազար, հարիւր, քառասուն, հայոց թուականին»: (Փրկչական 1691 թուին):

Լրւանցքագրութիւնը նոյն գրչից է, ինչ գրչից որ է պատմութեան բնագիրը:

Ամբողջութեան համար աւելացնենք, որ Ի խմբից միակ բացառութիւն կազմողն է Վանանդեցու հրատարակութիւնը, որ ամենամանը կէտերումն իսկ հաւատարիմ մնալով Ի խմբին, հէնց ճիշտ այս կէտում ունի ԱԲԳ խմբերի ծանօթ ընթերցուածը, որ անշուշտ մի ունադրութիւնն է՝ իրեն ու խմբակից ձեռագրը կրայից կատարուած, այլ և փակագծի մէջ ունի՝ երեխ հրատարակչի՝ բացատրութիւնը այսպէս. «Ա. յունան, Ա. լէք Քաղողքաց-ոց՝ առ Խունաց Զէ՝ և թէ՝ Քաղողքաց-ոց՝ առ Փէ՝ Յունաց՝ Դ. այն՝ Քաղողքաց-ոց՝ առ Քուր՝ և Յունաց՝ Ծի՝ Քաղողքաց-ոց՝ Ա. իշման՝ Յունաց»)

Այս բացատրութեան իմաստը ես չեմ ըմբռնում: Եթէ սակայն կայ որ և է իմաստ:

Վնումէ միայն նկատել որ ՈՒ խմբի ուղիղ ընթերցուածն է լինելու («զ. շ. առ թ») և «Լամբրոնացու» օրինակում (=Պ), թէ այդ մասին ոչինչ չկայ նշանակուած Կարինեանցի Բաղդատութեան մէջ: «Լամբրոնացու» օրինակը գանեւումէ Արժ. Ցէր Գիւտ քահանայի ձեռքում ուրեմն և Ցէր Հօրն է մնում սոսուգել այս ենթալրութիւնս: Այսն ուղիղ ընթերցուածն է լինելու և Լէյացիզի ձեռագրում (Պ), եթէ միայն սրբագրութեան չէ ենթարկուած Վանանդեցու նման: Այդ օրինակն եղել է Բառումզարտների ձեռքում բայց յարգելի զիտնականը երեկի չէ նկատել: Անցեալ տարի Խորենացու այս մի քանի կէտերը ձեռագրերում խուզարկելիս՝ ինձ օգնեց սիրայօժար գործակցութամբ դպ. Բագրատ Վարդաղարեանցը, Մայր Աթոռիս միաբաններից:

ՄԻԱԲԱՆ.



## ՄԵԾ ԿՐԻՏԻԿՈՍՐ

V.



(Հարունակութիւն \*).

ացի դրականական քննադատութեան այս եղանակից: այսինքն յիշատակարանը ԳՀ-ՀԱՅԻ ազդեցութեամբ մեկնելուց: Տէնը գործադրումէ և մի ուրիշ եղանակ: այն է դուրս բերել յիշատակարանը ներքին պատճառից: Ի՞նչ է պատճառը: Ֆակտ: որից կարելի է հետևեցնել ուրիշ ֆակտերի բնութիւնը: յարաբերութիւնն ու փոփոխութիւնը:

Այսպիսի ներքին պատճառ՝ ըստ Տէնի, գործի գերիշխող ընդունակութիւնն է կամ հիմնական յատկութիւնը: ան յատկութիւնը որ կայ ուղիղ հիմքում և ծառայումէ իրեւ նորա գլխաւոր արտայայտութիւն ինչպէս օրդանական այդպէս էլ ոգեկան աշխարհում: այսպիսով այս երկու աշխարհը միացնելով: Տէնը հետևեալ կերպով է բացարում

գերիշխող ընդունակութեան: վրայ հիմնուած հետազոտութեան մեթօդը:

Գերիշխող ընդունակութեան կամ հիմնական յատկութեան տէր մարդը՝ պատահարար հաւաքուած յատկութիւնների և ձգտումների կոյտ չէ: ասումէ նա: այլ կանոնաւ որ մեքանիզմ կամ սիստեմ: Եթէ օրինակ, նա բանաստեղծ է, ամեն բան նորանում փոխագարձ կազմակցութեան մէջ է գրանուում: և' ոճը, և' փարուշոյի ընտրութիւնը, և' բընաւորաթիւնը, և' հաւատալիքը, և' սովորութիւնները: և' հոգու և' տաղանդի բոլոր մասերը, այնպէս որ եթէ մէկը փոխումէ: միւսները չեն կարող մնալ նախկին գրութեան մէջ: Բայց եթէ մարդը կանոնաւոր մեքանիզմէ: այդ մեքանիզմը սակաւաթիւ ոյժերով է շարժողութեան բերում: մեծ մասամբ մի ոյժով որ հանգիստանումէ իրեւ նոցա միւսները: Այդ միակ ոյժը հեղինակի մօտ՝ սորա հոգու մէջ իշխող մի որ և է ընդունակութիւնն է կազմում: Ի նկատի ունենալով այն աշքի ընկնող գերը, որ կատարումէ գերիշխող ընդունակութիւնը՝ ոգեկան կեանքում: ստեղծագործութեան մէջ, Տէնը պնդումէ որ կրիտիկոսի գործը այն չը պիտի լինի: որ մի որ և իցէ հեղինակ բնաւորագրելու համար կուտակէ բազմաթիւ նկատողութիւնները: այլ այն: որ գտնէ նորանում գործող գլխաւոր ոյժը: Թող այդ հեղինակը վերին աստիճանի բաղմագիմի անձնաւորութիւն լինի: Թող նրա վրայ անդրագառնան ընտանիքը, գրացիք, ժամանակակիցները: Թող նա գտնուի իւր ընթերցանութեան, իւր հասարակական դիրքի: հազարաւոր հակառակ պատահականութեանց ազդեցութեան ներքոյ թող անմիիւ ու անհամար եկամուտ տարրեր ծծուին նորա մէջ ամեն կողմից: — բանի էութիւնը հոսանքի ուղղութիւնը օրոշելն է: նորա ոյժը չափելն է և այն ուղին ցոյց տալը: որով նա առաջ է գնում: ճանաչել առարկան նշանակումէ իմանալ պատճառը և հետեւ նորան իւր հետեւանքների ամբողջ շարքի վրայ: Իւր այս տեսակէտը Տէն փայլուն կերպով արդիւնաւորեց իւր: Essai sur Titre Lit: աշխատութեան մէջ: Աչա մի գործ որ մենք յանձնարարում ենք մեր պատմական գրականութեամբ զրադաւող բանասէրներին: մի գործ: որ բոլորովին նոր և ընդարձակ հորիզոններ կը բանաց մեր միամիտ և սահմանափակ հայեացքի առաջ, գրգելով մեզ աւելի հասուն և առողջամիտ պահանջներով մտենալ մեր հին պատմիչների ուսումնասիրութեան:

Տէնի այդ աշխատութիւնը որ նուիրուած է մեծ հոգմայեցի պատմագրի քննադատութեան և, ի գէպ

\* . Տէն, նախընթաց համարը: